ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2017 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարաններում անցկացված

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 5
1.1. Ամփոփ տեղեկություն 2017 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին 5
1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը 6
2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7
2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների 7
2.2. 2016 թ. և 2017 թ. արտաքին ընթացիկ գնահատումների միջին միավորների համեմատությունը 10
2.3. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 11
3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 12
4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 15
5. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ 16
5.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի 16
5.2. Հանրակրթական առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի 17
6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 20
6.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 20
6.2. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ հոսքերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի 21
7. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 22
8. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 25
9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 26
Եզրակացություն 28

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի մի շարք ուսումնական հաստատություններում, որոնք իրականացնում են հանրակրթական ավագ դպրոցի ծրագրեր, պարբերաբար անցկացվում է արտաքին ընթացիկ գնահատում, որը հնարավորություն է տալիս արձանագրելու այդ հաստատությունների ավագ դասարաններում սովորողների առաջադիմությունը և պարզելու դրա դինամիկան: Այդ նպատակով 2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանրակրթական առարկաներից իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում այն նույն ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների շրջանում, որոնք 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արդեն մասնակցել են նույն գնահատմանը 10-րդ դասարանում:

Հանրակրթական դպրոցների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով որոշ դպրոցներ վերակազմակերպվել են, այդ պատճառով գնահատումն անցկացվել է 68 հանրակրթական ուսումնական հաստատություններում՝ 73-ի փոխարեն:

Նպատակը

2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման նպատակն աշակերտների 11-րդ դասարանի գիտելիքների ստուգումն է և առաջադիմության շարժի գնահատումը:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գտնվող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտներն են. ընդհանուր հաշվով՝ 37 ավագ, 22 միջնակարգ և 4 ոչ պետական դպրոցների, ինչպես նաև 5 վարժարանների 3947 աշակերտ: Ընդհանուր բացակայությունը կազմել է 7.7 տոկոս:

Առարկաների ընտրությունը

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հնարավորություն են ունեցել ընտրելու երկու առարկա: Այդ ընտրությունը կատարվել է ստորև ներկայացված երեք տարբերակներից մեկով.

1. Մեկ պարտադիր[1] առարկա և մեկ բնագիտական[2] առարկա,
2. Մեկ պարտադիր առարկա և մեկ օտար[3] լեզու,

[1] Պարտադիր առարկաներն են հայոց լեզուն, մաթեմատիկան և հայոց պատմությունը:
[2] Բնագիտական առարկաներն են ֆիզիկան, կենսաբանությունը, քիմիան և աշխարհագրությունը:

3. Երկու պարտադիր առարկա:

Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումը

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչների կողմից, որոնք վերահսկել և ուղղորդել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կիրառվել է թեստերի 4 տարբերակ, միայն հայոց լեզվից՝ 8 տարբերակ:

Աշակերտների գրավոր աշխատանքները, պատասխանների ձևաթղթերի հետ միասին, տեղափոխվել են ԳԹԿ: Կարճ և ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել են առարկայական մասնագետների կողմից, արդյունքները անցկացվել են ձևաթղթերի համապատասխան դաշտերում, որից հետո ձևաթղթերը ենթարկվել են համակարգչային ստուգման:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները դասամատյաններում գրանցելու համար տրվել են համապատասխան դպրոցներին:

Վերլուծության իրականացումը

Վերլուծությունն ամբողջությամբ իրականացվել է IATA, Excel, ACCESS, SPSS ծրագրերի միջոցով: Արտաքին և ներքին գնահատման համակարգերի արդյունքների, ինչպես նաև հանրակրթական առարկաների համեմատությունները, իսկ հաջորդ տարիներին նաև աշակերտերի առաջադիմության դինամիկան համեմատելու համար, որոնք բնույթով և սանդղակավորմամբ տարբեր են, միավորները ներկայացված են առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությամբ (Item response theory-IRT), մինչդեռ հանրակրթական ուսումնական հաստատություններին արդյունքները տրամադրվել են Z-սանդղակով՝ ներքին գնահատմանը համադրելի դարձնելու համար: Առաջադրանքի պատասխանի ժամանակակից տեսությունը (այսուհետև՝ IRT[4]) դասական տեսության բարելավված մոդելն է, որը հնարավորություն է տալիս ստանալու առավել ճկուն և հավաստի տեղեկություններ:

Արտաքին ընթացիկ գնահատականներից բացի, ստեղծվել է նաև ներքին գնահատականների տվյալների բազա՝ աշակերտի 10-րդ դասարանի տարեկան գնահատականների հիման վրա:

---

[3] Օտար լեզուներն են ռուսաց լեզուն, անգլերենը, գերմաներենը և ֆրանսերենը:

[4] IRT տեսության մանրամասն նկարագրությունը տրված է նախորդ վերլուծության մեջ http://www.atc.am/files/verlucutyunner/2016/2016_petrvar_yntacik.pdf (էջ 4)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ամփոփ տեղեկություն 2017 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման մասին

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների մասնակցությունը 2017 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 1

Առարկան	Հայտագրված աշակերտների ընդհանուր		Մասնակցած աշակերտ-ների թիվը	Չմասնակցած աշակերտների		Անբավարար գնահատական ստացած աշակերտների	
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու	2919	37.2	2707	212	7.3	125	4.6
Հանրահաշիվ	1230	15.9	1157	73	5.9	20	1.7
Հայոց պատմություն	896	11.2	812	84	9.4	70	8.6
Ֆիզիկա	453	5.8	426	27	6	44	10.3
Քիմիա*	92	1.2	88	4	4.3	9	10.2
Կենսաբանություն	508	6.5	473	35	6.9	65	13.7
Աշխարհագրություն	145	1.8	132	13	9	25	18.9
Անգլերեն	985	12.3	893	92	9.3	52	5.8
Ռուսաց լեզու	620	7.7	559	61	9.8	65	11.6
Ֆրանսերեն*	25	0.3	24	1	4	6	25
Գերմաներեն*	21	0.3	19	2	9.5	1	5.3

**-ով նշված են վերլուծության մեջ չներառված առարկաները*

11-րդ դասարանում աշակերտներն արդեն կողմնորոշված են մասնագիտության ընտրության հարցում և մասնակցել են այն առարկաների գրավոր աշխատանքներին, որոնցից հանձնելու են միասնական քննություն: Աղյուսակ 1-ում տեսնում ենք, որ պարտադիր առարկաներից (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) ընտրություն կատարելիս աշակերտները նախապատվությունը տվել են «Հայոց լեզու»

առարկային (37.2 %), բնագիտական առարկաներից՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լեզուներից՝ «Անգլերեն» առարկային:

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Արտաքին ընթացիկ գնահատման թեստերի կառուցվածքը բոլոր առարկաների համար ներկայացված է ստորև բերված աղյուսակում: Բոլոր ընտրովի և կարճ պատասխաններով առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով՝ բացառությամբ հայոց պատմության 16-րդ (0-2 միավոր) և հայոց լեզվի 9-րդ (0-2 միավոր) և 10 րդ կարճ պատասխանով առաջադրանքներից (0-3 միավոր):

Աղյուսակ 2

Առարկան	Առաջադրանքների քանակը				Առավելագույն միավորը
	ընտրովի	կարճ	ընդարձակ	պնդումների փունջ	
Հայոց լեզու	11	2	-	1 (4 միավոր)	20
Հանրահաշիվ	9	5	1 (2 միավոր)	-	16
Հայոց պատմություն	12	4	1 (3 միավոր)	-	20
Ֆիզիկա	15	3	2 (1 միավոր)	-	20
Քիմիա	15	3	2 (2 միավոր)	-	20
Կենսաբանություն	15	4	1 (1 միավոր)	-	20
Աշխարհագրություն	15	4	1 (1 միավոր)	-	20
Օտար լեզու (անգլերեն, ռուսաց լեզու ֆրանսերեն, գերմաներեն)	12	5	1 (3 միավոր)	-	20

Գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների:

Աղյուսակ 3

Քննությունների արդյունքների գնահատման սանդղակներ				
Նախնական միավորը (0-16)	**Գնահատականը (1-10)**		**Նախնական միավորը (0-20)**	**Գնահատականը (1-10)**
0-1	1		0-1	1
2	2		2-3	2
3	3		4-5	3
4	4		6-7	4
5-6	5		8-10	5
7-8	6		11-13	6
9-11	7		14-15	7
12-13	8		16-17	8
14-15	9		18-19	9
16	10		20	10

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են հանրակրթական առարկաների միավորների բաշխման հիստոգրամները: Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը համաչափ են, հիմնականում գերակշռում են 5 և 6 միավորները (հատկապես «Հանրահաշիվ» առարկայում), բացառություն է կազմում «Անգլերեն» առարկայի միավորների բաշխման կորը, որը շեղված է դեպի բարձր միավորները:

Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 4

Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[5]	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)[6]	Հուսալի-ությունը[7]
Հայոց լեզու	2707	5.74	0.029	1.50	0.66
Հանրահաշիվ	1157	5.69	0.035	1.17	0.82
Հայոց պատմություն	812	5.69	0.061	1.74	0.78
Ֆիզիկա	426	5.26	0.076	1.56	0.79
Կենսաբանություն	473	6.12	0.104	2.26	0.86
Աշխարհագրություն	132	5.26	0.187	2.15	0.69
Անգլերեն	893	6.53	0.066	1.97	0.86
Ռուսաց լեզու	559	5.30	0.074	1.76	0.81

Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Կենսաբանություն» և «Անգլերեն» առարկաներից, մյուս առարկաներից միջին միավորները մոտ են 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5.5): Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են, հուսալիությունները՝ ընդունելի:

Վիճակագրական տվյալներ հետագա վերլուծության մեջ չներառված առարկաների վերաբերյալ

Այս ենթաբաժնում դասական տեսությամբ ներկայացված են որոշ վիճակագրական տվյալներ «Քիմիա», «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առականերից, որոնք մասնակիցների փոքր թվի պատճառով հնարավոր չի եղել ներկայացնել IRT տեսությամբ:

[5] Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:

[6] 10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:

[7] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Աղյուսակ 5

Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Քիմիա	88	6.05	0.219	2.05
Ֆրանսերեն	24	4.71	0.401	1.96
Գերմաներեն	19	6.26	0.432	1.88

«Ֆրանսերեն» առարկայի միջին միավորը նկատելի ցածր է:

2.2. 2016 թ. և 2017 թ. արտաքին ընթացիկ գնահատումների միջին միավորների համեմատությունը

Միավորները ներկայացված են IRT տեսությամբ, հետևաբար կարող ենք դրանք համեմատել այդ նույն աշակերտների 10-րդ դասարանում ցուցաբերած արդյունքների հետ: Միջին միավորների տարբերությունները ակնառու են դիագրամ 1-ում:

Դիագրամ 1



Դիագրամ 1-ում տեսնում ենք, որ բացի «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, մյուս առարկաներից աշակերտները գրանցել են միջին միավորների աճ:

2.3. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Գնահատականների խմբերի բաշխման ուսումնասիրությունը և համեմատությունն իրականացվել է IRT մաթեմատիկական մոդելի կիրառմամբ, որով գնահատվել է սովորողների պատրաստվածության մակարդակը՝ հիմնվելով տարբեր բարդության առաջադրանքների ճիշտ պատասխանի հավանականության գնահատման վրա: IRT-ն թույլ է տալիս գնահատականները ստանդարտացնել և բերել գնահատման ընդհանուր համակարգի, որը համեմատելի է դարձնում արտաքին ընթացիկ գնահատման առարկաների գնահատականները: Սույն վերլուծության մեջ գնահատականները խմբավորված են ըստ առաջադիմության չորս խմբերի (1-3, 4-5, 6-8 և 9-10), որոնց տոկոսային թվերը ներկայացված են ստորև բերված դիագրամում:

Դիագրամ 2



Դիագրամում տեսնում ենք, որ արտաքին գնահատմանը մասնակցած աշակերտները «գերազանց» (9 և 10 գնահատականներ) պատրաստվածության ամենամեծ տոկոսները, ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, գրանցել են «Անգլերեն» և «Կենսաբանություն» առարկաներից: Իսկ ըստ առարկաների «գերազանց» պատրաստվածության ամենափոքր՝ 1.9 տոկոսը դիտարկվել է «Հանրահաշիվ» առարկան ընտրած աշակերտների շրջանում: «Անբավարար» (1-3 գնահատականներ) պատրաստվածության ամենամեծ տոկոսը դիտարկվել է «Աշխարհագրություն» առարկայից: Հայոց լեզվից և հանրահաշվից անբավարար գնահատական ստացած աշակերտների թիվը նկատելի պակասել է: Բացի «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, մյուս առարկաներից 6-8 գնահատականներ ստացած աշակերտների թիվն աճել է, ինչն էլ իր ազդեցությունն է ունեցել միջին միավորների ձևավորման վրա:

3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին և ներքին գնահատումների միավորները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման ժամանակ կիրառվում են բազմաբնույթ գործիքներ՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը:

Աղյուսակ 6

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	5.74	0.029	1.50
	Ներքին	6.91	0.034	1.79
Հանրահաշիվ	Արտաքին	5.69	0.035	1.17
	Ներքին	6.82	0.054	1.84
Հայոց պատմություն	Արտաքին	5.69	0.061	1.74
	Ներքին	7.16	0.063	1.78
Ֆիզիկա	Արտաքին	5.26	0.076	1.56
	Ներքին	6.86	0.088	1.82
Կենսաբանություն	Արտաքին	6.12	0.104	2.26
	Ներքին	7.16	0.077	1.67
Աշխարհագրություն	Արտաքին	5.26	0.187	2.15
	Ներքին	7.04	0.157	1.81
Անգլերեն	Արտաքին	6.53	0.066	1.97
	Ներքին	7.57	0.060	1.79
Ռուսաց լեզու	Արտաքին	5.30	0.074	1.76
	Ներքին	7.03	0.086	2.03

Աղյուսակում տեսնում ենք, որ ներքին գնահատման միջին միավորները 6,82-ից (հանրահաշիվ) 7.57 (անգլերեն) միջակայքում են: Ինչպես արդեն նշել ենք,

արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» և «Կենսաբանություն» առարկաներից, հետևաբար, այս առարկաներից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունն ամենափոքրն է՝ 1 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը գրանցվել է աշխարհագրությունից՝ 1.8 միավոր: Աշակերտների 10-րդ և 11-րդ դասարաններում գրանցած ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները ակնառու են դիագրամ 3-ում:

Դիագրամ 3



Դիագրամում տեսնում ենք, որ բացի «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, աշակերտների ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները 10-րդ դասարանում ավելի մեծ են եղել, քան 11-րդում: Ամենամեծ տարբերությունը 10-րդ դասարանում գրանցվել է «Հանրահաշիվ» առարկայից՝ 2,4 միավոր, որը 11-րդ դասարանում դարձել է 1,1 միավոր:

Դիագրամ 4-ում ներկայացված են 2017 թ. ներքին և արտաքին գնահատումների միավորների խմբերի տոկոսային թվերի համադրությունները: Դիագրամի զույգ սյուներից առաջինը ներկայացնում է յուրաքանչյուր առարկայի ներքին գնահատումը, երկրորդը՝ արտաքին գնահատումը:

Դիագրամ 4



Դիագրամ 4-ում տեսնում ենք, որ ի տարբերություն արտաքին գնահատման՝ ներքին գնահատման դեպքում 1-3 գնահատականներ գրեթե չկան, իսկ 9-10 գնահատականների խմբերը նշանակալիորեն մեծ են:

4. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների 54,9 %-ը աղջիկներ են, 45,1 %-ը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բոլոր առարկաներից վիճակագրական տվյալներ՝ ըստ սեռերի:

Աղյուսակ 7

Առարկան	Սեռը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	աղջիկ	1630	6.06	1.45	0.036
	տղա	1077	5.27	1.45	0.044
Հանրահաշիվ	աղջիկ	441	5.86	1.12	0.054
	տղա	716	5.58	1.19	0.045
Հայոց պատմություն	աղջիկ	467	5.98	1.73	0.080
	տղա	345	5.30	1.67	0.090
Ֆիզիկա	աղջիկ	119	5.29	1.51	0.138
	տղա	307	5.25	1.58	0.090
Կենսաբա-նություն	աղջիկ	298	6.58	2.05	0.119
	տղա	175	5.34	2.39	0.180
Աշխարհա-գրություն	աղջիկ	58	5.69	2.05	0.270
	տղա	74	4.92	2.17	0.252
Անգլերեն	աղջիկ	583	6.83	1.83	0.076
	տղա	310	5.97	2.10	0.119
Ռուսաց լեզու	աղջիկ	324	5.67	1.79	0.100
	տղա	235	4.78	1.57	0.102

Ստորև բերված դիագրամում ներկայացված է բոլոր առարկաներից աշակերտների միջին միավորների համեմատությունն ըստ սեռերի:

Դիագրամ 5



Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները բարձր են տղաների միջին միավորներից: «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից տղաների և աղջիկների միջին միավորները թեև քիչ բարձրացել են, սակայն պահպանել են միմյանց նկատմամբ իրենց համաչափությունը. «Հանրահաշիվ» առարկայի դեպքում տարբերությունը կրկին կազմել է 0.3 միավոր, «Ֆիզիկա» առարկայի դեպքում գրեթե համընկել են: Մյուս առարկաների միջին միավորների տարբերությունը կազմել է 0.7-1.2 միավոր:

5. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՍՔԵՐԻ

5.1. Սովորողների բաշխումն ըստ հոսքերի

Դիագրամ 6-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների տոկոսային թվերն ըստ հոսքերի:

Դիագրամ 6



Միջնակարգ դպրոցում ուսուցումն իրականացվում է միայն ընդհանուր հոսքի ծրագրով: Մյուս տիպերի հանրակրթական ուսումնական հաստատություններում աշակերտները նախապատվությունը տալիս են հումանիտար հոսքին, այնուհետև բնագիտական և տնտեսագիտական հոսքերին, ֆիզմաթ հոսքն ընտրում են փոքր թվով աշակերտներ:

5.2. Հանրակրթական առարկաների միջին միավորներն ըստ հոսքերի

Աղյուսակ 8-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակիցների թիվը ըստ հոսքերի և նրանց միջին միավորները բոլոր առարկաներից: Մգեցված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Աղյուսակ 8

Հոսքը / Առարկան	Բնագիտական		Հումանիտար		Ընդհանուր		Տնտեսագիտական		Ֆիզմաթ	
	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը
Հայոց լեզու	511	5.68	1136	**5.82**	584	5.52	424	**5.94**	33	**5.94**
Հանրահաշիվ	510	**5.82**	29	4.97	94	4.99	373	5.44	149	**6.47**
Հայոց պատմություն	26	5.08	548	**5.86**	200	5.47	18	4.89	3	**7.00**
Ֆիզիկա	291	**5.78**	3	**7.00**	26	3.81	5	4.40	101	4.13
Կենսաբանություն	256	**6.60**	32	5.94	172	5.42	4	**6.25**	9	**6.33**
Աշխարհագրություն	23	**6.09**	28	4.82	57	4.95	21	5.24	3	**9.00**
Անգլերեն	63	**7.51**	512	6.29	71	**6.62**	223	**6.63**	24	**7.96**
Ռուսաց լեզու	73	**5.47**	288	5.13	125	5.25	83	**5.78**	10	4.90

Աղյուսակում ըստ հոսքերի աշակերտների միջին միավորները համեմատելով նախորդ տարվա աղյուսակի միջին միավորների հետ՝ տեսնում ենք, որ դրանք գրեթե չեն փոխվել՝ ամենաշատ մգեցված միջին միավորները կրկին բնագիտական և ֆիզմաթ հոսքերում են: Ֆիզմաթ հոսքի մասնակիցները կազմել են ընդհանուր մասնակիցների 4.6 տոկոսը և ինչպես 10-րդ դասարանում, այս տարի նույնպես հիմնականում ընտրել են «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները: Հումանիտար հոսքում ընդհանուր միջին միավորից բարձր են «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու» առարկաների, տնտեսագիտական հոսքում՝ «Հայոց լեզու», «Կենսաբանություն», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաների միջին միավորները: Ընդհանուր հոսքը նախորդ տարվա պես առանձնանում է միայն մեկ մգեցված միջին միավորով՝ «Անգլերեն» առարկայից:

Դիագրամ 7-ում ներկայացված են 2016 և 2017 թվականների միջին միավորների համեմատություններն ըստ հոսքերի:

Դիագրամ 7

Ինչպես նկատելի է դիագրամ 1-ում (երկու տարիների համեմատության մեջ), միջին միավորների աճ չի գրանցվել «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Ըստ հոսքերի վերլուծության մեջ տեսնում ենք, որ «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից գրեթե բոլոր հոսքերում միջին միավորների աճ չի գրանցվել՝ բացառությամբ ֆիզմաթ հոսքի, որտեղ «Աշխարհագրություն» առարկայից գրանցվել է 1.7 միավորի աճ, սակայն այդ աճը չի կարելի համարել նշանակալի, քանի որ այս առարկան այս հոսքում ընտրել են ընդամենը երեք աշակերտներ: Հետաքրքիր է նկատել, որ «Ֆիզիկա» առարկայից միջին միավորը 2.7-ով նվազել է ֆիզմաթ հոքում, իսկ 3.2 միավորով աճ է գրանցվել հումանիտար հոսքում, սակայն այդ աճը նույնպես չի կարելի համարել նշանակալի, քանի որ այն ընտրել են ընդամենը երեք աշակերտներ:

Միջին միավորի նշանակալի աճ է գրանցվել «Կենսաբանություն» առարկայից գրեթե բոլոր հոսքերում, բացի ընդհանուր հոսքից, անգլերենից՝ ֆիզմաթ հոսքում: Մյուս առարկաներից միջին միավորների աճը նշանակալի չէ:

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

6.1. Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 69.1 տոկոսը ավագ դպրոցների, 12.5 տոկոսը միջնակարգ դպրոցների, 15.8 տոկոսը վարժարանների և 2.6 տոկոսը ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտներ են: Աղյուսակ 9-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Մգեցված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից:

Աղյուսակ 9

Առարկան	Առարկայի ընդհանուր միջին միավորը	Ավագ դպրոց			Միջնակարգ դպրոց			Վարժարան			Ոչ պետական դպրոց		
		Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը	Մասնակիցների թիվը	Միջին միավորը	Ստանդարտ շեղումը
Հայոց լեզու	5.74	2066	**5.75**	1.46	415	5.44	1.60	166	**6.01**	1.54	60	**6.90**	1.49
Հանրահաշիվ	5.69	668	5.41	1.15	52	5.04	1.33	400	**6.27**	0.98	37	5.41	0.93
Հայոց պատմություն	5,69	587	**5.76**	1.73	129	5.31	1.66	73	**5.73**	1.84	23	**5.87**	1.77
Ֆիզիկա	5,26	105	4.43	1.315	23	3.70	0.876	295	**5.69**	1.491	3	4,00	0
Կենսաբանություն	6,12	292	**6.21**	2.33	92	4.96	1.90	75	**6.79**	1.78	14	**8.29**	1.86
Աշխարհագրություն	5,26	65	**5.43**	2.24	55	4.85	1.79	4	**8.50**	1.73	8	5,00	2.62
Անգլերեն	6,53	742	6.35	1.90	50	6.52	1.87	68	**7.44**	2.10	33	**8.70**	1.47
Ռուսաց լեզու	5,30	394	**5.35**	1.83	97	4.95	1.48	62	**5.31**	1.58	6	**7,00**	1.41

Աղյուսակ 9-ում տեսնում ենք, որ վարժարաններում բոլոր առարկաներից միջին միավորները բարձր են եղել տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից: Միջնակարգ դպրոցներում բոլոր առարկաներից գրանցվել են տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից ցածր արդյունքներ: Ավագ դպրոցներում պակասել է «Հայոց պատմություն» և բնագիտական առարկաներ ընտրողների թիվը, փոխարենը ավելացել է «Անգլերեն» առարկան ընտրողների թիվը, իսկ արդյունքները ցածր են «Հանրահաշիվ», «Ֆիզիկա» և «Անգլերեն» առարկաներից: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնակիցների թիվը զգալի փոքր է, միջին միավորներն էլ, ինչպես 10-րդ դասարանում, այնպես էլ 11-րդ դասարանում, ցածր են եղել «Հանրահաշիվ», «Ֆիզիկա», այս տարի նաև «Աշխարհագրություն» առարկաներից:

6.2. Արտաքին ընթացիկ գնահատման միջին միավորներն ըստ հոսքերի և հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի

Հետևյալ դիագրամում ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի և հոսքերի ներկայացված է աշակերտների պատրաստվածությունը պարտադիր առարկաներից: Քիչ մասնակիցների պատճառով ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տվյալները չեն ներառվել դիագրամում: Միջնակարգ դպրոցի աշակերտների արդյունքները երևում են միայն ընդհանուր հոսքում, քանի որ աշակերտները սովորում են միայն այդ ծրագրով:

Դիագրամ 8



7. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դիագրամ 9-ում ներկայացված է 2017 թ. արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտների միջին միավորների դիրքերը սանդղակի միջին միավորի նկատմամբ՝ պարտադիր առարկաներից: Դիագրամի յուրաքանչյուր ուղղահայաց գծի վրա գտնվում են տվյալ ուսումնական հաստատության միջին միավորները այն առարկաներից, որոնք ընտրել են այդ ուսումնական հաստատությունում. կապույտով նշված է հայոց լեզվի, կարմիրով՝ հայոց պատմության, կանաչով՝ հանրահաշվի միջին միավորները, իսկ մանուշակագույն կետագիծը սանդղակի միջին միավորն է (5.5): Քանի որ «Հայոց լեզու» առարկան գրեթե բոլոր ուսումնական հաստատություններն են ընտրել, հետևաբար, միջին միավորները դասավորված են այդ առարկայի միջին միավորների աճման կարգով:

Դիագրամ 9



Աղյուսակ 10-ում «Հայոց լեզու» առարկայից երկու տարիների համար ներկայացված են այն ուսումնական հաստատությունների միջին միավորների համեմատությունները, որոնց միջին միավորները 2016 թվականին եղել են սանդղակի միջին միավորից վերև:

Աղյուսակ 10

Ուսումնական հաստատությունը	Հայոց լեզու		
	Միջին միավորը		Երկու տարիների միջին միավորների տարբերությունը
	2016 թ.	2017 թ.	
Կապանի թիվ 10 միջն. դպրոց	7.9	6.8	- 1.1
Գուգարքի ավագ դպրոց	7.2	6.4	- 0.8
«Էօրնեկեան» միջն. դպրոց	7.1	6.6	- 0.5
«Հայ կրթություն» կրթ. հիմնադր.	6.6	7.5	0.9
Մրգաշատի թիվ 2 միջն. դպրոց	6.3	4.3	- 2
«Ուսում» հանրակրթական դպրոց	6.1	6.1	0
Նորատուսի թիվ 1 միջն. դպրոց	6.1	7.2	1.1
Վանաձորի թիվ 24 միջն. դպրոց	6.0	5.8	- 0.2
Կապանի թիվ 2 ավագ դպրոց	5.7	6.2	0.5
Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց	5.6	5.8	0.2
Իջևանի ավագ դպրոց	5.6	6.6	1
Մասիսի թիվ 5 ավագ դպրոց	5.6	6.2	0.6

Աղյուսակում տեսնում ենք, որ 2016 թվականին բարձր միջին միավոր գրանցած ոչ բոլոր դպրոցներն են գրանցել միջին միավորի աճ:

Աղյուսակ 11-ում ներկայացված են այն դպրոցները, որոնց 11-րդ դասարանի աշակերտները իրենց 10-րդ դասարանի համեմատ գրանցել են միջին միավորի աճ՝ առնվազն մեկ միավորով, և գրավոր աշխատանքին մասնակցած աշակերտների թիվը մեծ է 10-ից:

Աղյուսակ 11

Ուսումնական հաստատությունը	Հայոց լեզու		
	Միջին միավորը		Երկու տարիների միջին միավորների տարբերությունը
	2016 թ.	2017 թ.	
Արտաշատի ավագ դպրոց	4.7	5.7	1.0
Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոց	6.1	7.2	1.1
Նոյեմբերյանի ավագ դպրոց	5.0	6.1	1.1
Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց	4.3	5.4	1.1
Միսիանի ավագ դպրոց	4.8	5.9	1.1

Գավառի ավագ դպրոց	4.6	5.8	1.2
Երևանի թիվ 142 ավագ դպրոց	4.2	5.4	1.2
Իջևանի վարժարան	4.9	6.1	1.2
Ախուրյանի Ն. Աղբալյանի անվան ավագ դպրոց	4.1	5.3	1.2
Արարատի ավագ դպրոց	5.3	6.6	1.3
Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց	4.1	5.6	1.5
Զորագյուղի ավագ դպրոց	3.9	5.5	1.6
Երևանի թիվ 115 ավագ դպրոց	3.8	5.8	2.0

Աղյուսակ 12-ում «Հանրահաշիվ» առարկայից ներկայացված են այն ուսումնական հաստատությունների երկու տարիների միջին միավորների համեմատությունները, որոնց միջին միավորները 2016 թվականին եղել են սանդղակի միջին միավորից վերև:

Աղյուսակ 12

Ուսումնական հաստատությունը	Հանրահաշիվ		
	Միջին միավորը		Երկու տարիների միջին միավորների տարբերությունը
	2016 թ.	2017 թ.	
Վանաձորի թիվ 24 միջն. դպրոց	8.0	6.3	- 1.7
Երևանի Ա. Շահինյանի անվ. ֆիզմաթ հատուկ դպրոց	7.4	6.9	- 0.5
Կապանի թիվ 10 միջն. դպրոց	7.3	7.0	- 0.3
Երևանի թիվ 54 ավագ դպրոց	6.7	7.2	0.5
Վայքի քաղաք. պետ. հանրակրթական վարժարան	6.5	-	-
Գավառի թիվ 2 միջն. դպրոց	6.5	4.8	- 1.7
«Ուսում» հանրակրթ. դպրոց	6.2	5.4	- 0.8
Իջևանի վարժարան	6.0	7.0	1
Արարատի ավագ դպրոց	6.0	5.0	- 1
Գուգարքի ավագ դպրոց	6.0	6.0	0
ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոց	5.9	6.1	0.3
«Էօրնեկեան» միջն. դպրոց	5.8	6.5	0.7
Երևանի թիվ 139 ավագ դպրոց	5.8	5.1	- 0.7
Արթիկի թիվ 7 ավագ դպրոց	5.6	-	-
«Հայ կրթություն» կրթ. հիմնադրամ	5.6	5.7	0.1

8. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշակերտների միջին միավորները (ստանդարտ շեղումը) ըստ վարչատարածքային միավորների: Մգեցված են այն միջին միավորները, որոնք համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ են կամ հավասար:

Աղյուսակ 13

Առարկան	Ընդհանուր միջին միավորը	Շիրակ	Երևան	Լոռի	Արագա-ծոտն	Սյունիք	Արա-րատ	Գեղար-քունիք	Արմա-վիր	Տավուշ	Վայոց ձոր	Կոտայք
Հայոց լեզու	**5.74**	5.6 (1,4)	**5.7** (1,5)	**5.7** (1,4)	**5.8** (1,4)	**6.0** (1,5)	5.7 (1,5)	5.7 (1,6)	5.5 (1,4)	**6.3** (1,6)	5.4 (1,4)	**5.8** (1,5)
Հանրահաշիվ	**5.69**	5.2 (0,7)	**5.9** (1,2)	5.2 (1,0)	5.6 (1,3)	**6.0** (1,0)	5.2 (0,9)	5.2 (0,9)	5.2 (1,2)	**6.0** (0,7)	5.0 (0,9)	5.5 (1,2)
Հայոց պատմություն	**5.69**	5.3 (1,5)	**5.8** (1,8)	**6.0** (1,7)	**6.1** (1,6)	**6.2** (1,7)	**5.8** (1,5)	5.0 (1,2)	4.8 (1,6)	**7.2** (1,8)	5.2 (1,9)	**5.7** (1,7)
Ֆիզիկա	**5.26**	**6.0** (1,4)	**5.6** (1,5)	4.0 (-)	4.8 (1,0)	3.7 (1,0)	4.5 (0,5)	3.9 (0,8)	5.0 (1,0)	3.9 (1,9)	5.1 (1,7)	**5.6** (2,1)
Կենսաբա-նություն	**6.12**	5.9 (2,0)	**6.1** (2,5)	5.7 (2,1)	**6.4** (2,1)	**7.8** (1,9)	**6.1** (2,6)	4.7 (1,4)	**7.3** (2,1)	**7.0** (1,7)	5.4 (2,3)	4.4 (1,6)
Աշխարհա-գրություն	**5.26**	**6.0** (2,2)	**5.3** (2,4)	**6.0** (-)	**5.3** (1,5)	**6.3** (2,1)	4.9 (2,1)	5.1 (1,2)	3.2 (1,8)	**7.8** (2,1)	**6.5** (2,1)	4.0 (1,0)
Անգլերեն	**6.53**	5.9 (1,7)	**7.0** (1,9)	5.2 (1,6)	6.4 (1,7)	**6.6** (1,8)	6.4 (2,1)	5.8 (1,7)	6.1 (2,1)	5.6 (1,4)	6.3 (2,3)	6.4 (2,0)
Ռուսաց լեզու	**5.30**	5.1 (1,7)	**6.1** (1,7)	5.1 (1,4)	4.8 (1,5)	**6.4** (2,0)	4.9 (1,7)	4.5 (1,7)	4.6 (1,3)	**5.4** (1,1)	4.1 (1,7)	5.3 (1,7)

Լավագույն արդյունքներով աչքի են ընկել Երևանը և Սյունիքի մարզը, որտեղ միայն «Ֆիզիկա» առարկայից է աշակերտների միջին միավորը ցածր եղել ընդհանուր միջին միավորից: Ցածր արդյունքներով առանձնացել է Գեղարքունիքի մարզը, որտեղ ոչ մի առարկայից աշակերտները չեն գրանցել ընդհանուր միջին միավորից բարձր արդյունք:

9. ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած 68 հանրակրթական ուսումնական հաստատություններից 24-ը եղել են խոշոր քաղաքների, 17-ը՝ միջին քաղաքների, 11-ը՝ փոքր քաղաքների, 14-ը՝ գյուղերի և 2-ը բարձրլեռնային գյուղերի (Զորագյուղի ավագ դպրոց և Արագածի թիվ 1 միջնակարգ դպրոց) ուսումնական հաստատություններ:

Դիագրամ 10



Խոշոր քաղաքների աշակերտները ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես մյուս տիպերի բնակավայրերի աշակերտներից նշանակալիորեն բարձր արդյունք են ունեցել «Ֆիզիկա» առարկայից, թեև նախորդ տարվա համեմատ այս առարկայից միջին միավորներն իջել են քաղաքաբնակ աշակերտների շրջանում, իսկ գյուղաբնակներից ոչ մի աշակերտ չի ընտրել այս առարկան: Միջին քաղաքների և բարձրլեռնային գյուղերի աշակերտները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն լավ արդյունք են ցուցաբերել «Կենսաբանություն» առարկայից, մյուս բնակավայրերում էլ ոչ նշանակալի, սակայն միջին միավորների աճ է գրանցվել այս առարկայից: Փոքր քաղաքների աշակերտները նշանակալիորեն բարձր արդյունք են գրանցել «Աշխարհագրություն»

առարկայից: Մյուս առարկաներից քաղաքաբնակ աշակերտների միջին միավորները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն չեն փոխվել:

Գյուղական բնակավայրերի աշակերտների միջին միավորները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն բարձրացել են «Հանրահաշիվ» առարկայից: Գյուղերում միջին միավորներն իջել են «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Ինչպես 10-րդ դասարանում, 11-րդ դասարանում նույնպես բարձրլեռնային գյուղերի աշակերտները չեն ընտրել «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Անգլերեն» առարկաները, իսկ մյուս առարկաներից, որոնց արդյունքները նախորդ տարի նշանակալիորեն ցածր էին, այս տարի բավական բարձրացել են, հատկապես «Ռուսաց լեզու» առարկայից: Ռուսաց լեզվից մյուս տիպերի բնակավայրերի աշակերտների միջին միավորներն իջել են:

Եզրակացություն

2017 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 68 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Գնահատումն անցկացվել է այն նույն ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանի աշակերտների շրջանում, որոնք 2016 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արդեն մասնակցել են նույն գնահատմանը 10-րդ դասարանում: Գնահատման նպատակն աշակերտների 11-րդ դասարանի գիտելիքների ստուգումն էր և առաջադիմության շարժի գնահատումը:

Մասնակիցները հնարավորություն են ունեցել պարտադիր առարկաներից, բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ընտրելու երկու առարկա: Ընտրության հնարավոր տարբերակները մանրամասն ներկայացված են ներածության մեջ: 11-րդ դասարանում աշակերտներն արդեն կողմնորոշված են մասնագիտության ընտրության հարցում և մասնակցել են այն առարկաների գրավոր աշխատանքներին, որոնցից պատրաստվում են հանձնել միասնական քննություն: Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես պարտադիր առարկաներից (հայոց լեզու, մաթեմատիկա, հայոց պատմություն) ընտրություն կատարելիս աշակերտները նախապատվությունը տվել են «Հայոց լեզու» առարկային, բնագիտական առարկաներից՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լեզուներից՝ «Անգլերեն» առարկային:

- **Միավորների բաշխման բնութագրիչները**

Ամենաբարձր միջին միավորները գրանցվել են «Կենսաբանություն» և «Անգլերեն» առարկաներից, մյուս առարկաներից միջին միավորները մոտ են 1-10 գնահատականների սանդղակի միջին միավորին (5.5): Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են, հուսալիությունը՝ ընդունելի: Համեմատելով երկու տարիների արդյունքները՝ տեսնում ենք, որ բացի «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, մյուս առարկաներից աշակերտները գրանցել են միջին միավորների աճ:

- **Գնահատականների խմբերի համեմատությունն ըստ առարկաների և տարիների**

Արտաքին գնահատմանը մասնակցած աշակերտները «գերազանց» (9 և 10 գնահատականներ) պատրաստվածության ամենամեծ տոկոսը, ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, գրանցել են «Անգլերեն» և «Կենսաբանություն» առարկաներից: Իսկ ըստ առարկաների «գերազանց» պատրաստվածության ամենափոքր՝ 1.9 տոկոսը

դիտարկվել է «Հանրահաշիվ» առարկան ընտրած աշակերտների շրջանում: «Անբավարար» (1-3 գնահատականներ) պատրաստվածության ամենամեծ տոկոսները դիտարկվել է «Աշխարհագրություն» առարկայից: Հայոց լեզվից և հանրահաշվից անբավարար գնահատական ստացած աշակերտների թիվը նկատելիորեն պակասել է: Բացի «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, մյուս առարկաներից 6-8 գնահատականներ ստացած աշակերտների թիվն աճել է:

- **«Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը**

Ի տարբերություն արտաքին գնահատման՝ ներքին գնահատման դեպքում 1-3 գնահատականներ գրեթե չեն գրանցվել, իսկ 9-10 գնահատականների խմբերը նշանակալիորեն մեծ են: Ինչպես արդեն նշել ենք, արտաքին գնահատման ժամանակ ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» և «Կենսաբանություն» առարկաներից, հետևաբար, այս առարկաներից ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունն ամենափոքրն է՝ 1 միավոր: Այս տեսանկյունից ամենամեծ տարբերությունը գրանցվել է աշխարհագրությունից՝ 1.8 միավոր: Բացի «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից, աշակերտների ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունները 10-րդ դասարանում ավելի մեծ են եղել, քան 11-րդում: Ամենամեծ տարբերությունը 10-րդ դասարանում գրանցվել է «Հանրահաշիվ» առարկայից՝ 2,4 միավոր, որը 11-րդ դասարանում դարձել է 1,1 միավոր:

- **Վերլուծություն ըստ սեռերի**

Ըստ սեռերի արդյունքների համեմատության մեջ տեսնում ենք, որ ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես բոլոր առարկաներից աղջիկների միջին միավորները բարձր են տղաների միջին միավորներից: «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաներից տղաների և աղջիկների միջին միավորները թեև քիչ բարձրացել են, սակայն պահպանել են միմյանց նկատմամբ իրենց համաչափությունը. «Հանրահաշիվ» առարկայի դեպքում տարբերությունը կրկին կազմել է 0.3 միավոր, «Ֆիզիկա» առարկայի դեպքում գրեթե համընկել են: Մյուս առարկաների միջին միավորների տարբերությունը կազմել է 0.7-1.2 միավոր:

- **Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ հոսքերի**

Ըստ հոսքերի աշակերտների միջին միավորները համեմատելով նախորդ տարվա հետ՝ տեսնում ենք, որ դրանք գրեթե չեն փոխվել, ամենաշատ ընդհանուր միջին միավորից մեծ միջին միավորները կրկին բնագիտական և ֆիզմաթ հոսքերում են: Ֆիզմաթ հոսքի մասնակիցները կազմել են ընդհանուր մասնակիցների 4.6 տոկոսը և ինչպես 10-րդ դասարանում, այս տարի նույնպես, հիմնականում ընտրել են «Հանրահաշիվ» և «Ֆիզիկա» առարկաները: Հումանիտար հոսքում ընդհանուր միջին միավորից բարձր են «Հայոց պատմություն» և «Հայոց լեզու» առարկաների,

տնտեսագիտական հոսքում՝ «Հայոց լեզու», «Կենսաբանություն», «Անգլերեն» և «Ռուսաց լեզու» առարկաների միջին միավորները:

- **Ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Վարժարաններում բոլոր առարկաներից միջին միավորները բարձր են եղել տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից: Միջնակարգ դպրոցներում բոլոր առարկաներից գրանցվել են տվյալ առարկաների ընդհանուր միջին միավորներից ցածր արդյունքներ: Ավագ դպրոցներում պակասել է «Հայոց պատմություն» և բնագիտական առարկաներ ընտրածների թիվը, փոխարենը ավելացել է «Անգլերեն» առարկան ընտրածների թիվը, իսկ արդյունքները ցածր են «Հանրահաշիվ», «Ֆիզիկա» և «Անգլերեն» առարկաներից: Ոչ պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում միջին միավորները, ինչպես 10-րդ դասարանում, այնպես էլ 11-րդ դասարանում, ցածր են եղել «Հանրահաշիվ», «Ֆիզիկա», այս տարի նաև «Աշխարհագրություն» առարկաներից:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ վարչատարածքային միավորների**

Լավագույն արդյունքներով աչքի են ընկել Երևանը և Սյունիքի մարզը, որտեղ միայն «Ֆիզիկա» առարկայից է աշակերտների միջին միավորը ցածր եղել ընդհանուր միջին միավորից: Ցածր արդյունքներով առանձնացել է Գեղարքունիքի մարզը, որտեղ ոչ մի առարկայից աշակերտները չեն գրանցել ընդհանուր միջին միավորից բարձր արդյունք:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ բնակավայրերի տիպերի**

Խոշոր քաղաքների աշակերտները, ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, մյուս տիպերի բնակավայրերից նշանակալիորեն բարձր արդյունք են ունեցել «Ֆիզիկա» առարկայից, թեև նախորդ տարվա համեմատ այս առարկայից միջին միավորներն իջել են քաղաքաբնակ աշակերտների շրջանում, իսկ գյուղաբնակներից ոչ մի աշակերտ չի ընտրել այս առարկան: Միջին քաղաքների և բարձրլեռնային գյուղերի աշակերտները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն լավ արդյունք են ցուցաբերել «Կենսաբանություն» առարկայից, մյուս բնակավայրերում էլ ոչ նշանակալի, սակայն միջին միավորների աճ են գրանցել այս առարկայից: Փոքր քաղաքների աշակերտները նշանակալիորեն բարձր արդյունք են գրանցել «Աշխարհագրություն» առարկայից: Մյուս առարկաներից քաղաքաբնակ աշակերտների միջին միավորները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն չեն փոխվել

Գյուղական բնակավայրերի աշակերտների միջին միավորները նախորդ տարվա համեմատ նշանակալիորեն բարձրացել են «Հանրահաշիվ» առարկայից: Գյուղերում միջին միավորներն իջել են «Հայոց պատմություն», «Աշխարհագրություն» և «Ռուսաց լեզու» առարկաներից: Ինչպես 10-րդ դասարանում, 11-րդ դասարանում նույնպես

բարձրլեռնային գյուղերի աշակերտները չեն ընտրել «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» և «Անգլերեն» առարկաները, իսկ մյուս առարկաներից, որոնց արդյունքները նախորդ տարի նշանակալիորեն ցածր էին, այս տարի բավական բարձրացել են, հատկապես «Ռուսաց լեզու» առարկայից: Ռուսաց լեզվից մյուս տիպերի բնակավայրերի աշակերտների միջին միավորներն իջել են: